

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	ՃԱՐՏԱՐԱԴԵՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ (7.20ՃՆԽ007)
ECTS կրեդիտ	4 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. <i>(գիտելիք և իմացություն)</i> • ուրվագծել ճարտարապետական միջավայրը՝ կառուցվածքային համալիր միջավայրի նախագծման և կազմակերպման բնագավառում, • թվարկել հարդարման նյութերի օգտագործման առանձնահատկությունները բնակելի, հասարակական, արտադրական, հանգստի համալիրներում, • սահմանել և արտահայտել տարածական միջավայրի իրավիճակը, • ցուցաբերել մասնագիտական մոտեցում ճարտարապետական միջավայրի նախագծման, համակարգված ճարտարապետական միջավայրի ստեղծման և դրա բոլոր էլեմենտների համալիրացման ընթացքում, <i>(կարողություններ)</i> • համադրել միջավայրի բոլոր էլեմենտները համակարգված ճարտարապետական միջավայրի ստեղծման ընթացքում՝ ավանդական և նոր տեխնոլոգիաների միջոցով, • կիրառել ավանդական նյութեր և դրանց նոր արտահայտություն հաղորդել, • գործածել և կատարելագործել նոր նյութերի կիրառման հնարավորությունները՝ ֆունկցիոնալ, գեղարվեստական և ներդաշնակ հորինվածքով, • մասնակցել բնագավառի գիտահետազոտական աշխատանքներին, միջազգային և տեղական մրցույթներին, գիտաժողովներին, • մշակել գիտական թեզեր, • կիրառել նոր նյութեր՝ բացահայտելով կիրառման հնարավորություններն ու նորարարական առաջարկները:

Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Տարածական միջավայրում ճարտարապետության դերն ու նշանակությունը: • Տարածական միջավայրի դիզայնը որպես ճարտարապետական նախագծման առանձնակի ուղղություն: • Ճարտարապետական միջավայրը որպես տարածական մշակույթի միջոց և դրա առանձնահատկությունները: • Համալիրությունն ու կառուցվածքը՝ որպես միջավայրի գրաֆիկական ձևավորման կարևոր խնդիրներ: • Ճարտարապետական միջավայրի հոգեբանական, տեսողական ընկալման առանձնահատկությունները: • Նյութը, գույնը, լույսը դիզայնում և հորինվածքային համալիրում: • Ավանդական և նորագույն տեխնիկաներ: • Հարդարման նյութերի օգտագործման առանձնահատկությունները բնակելի, հասարակական, արտադրական և հանգստի համալիրներում: • Մետաղի դերը ճարտարապետական ձևերի ստեղծման գործում հայ-թեքի ժամանակ: • Ճարտարապետական միջավայրի դիզայներական նախագծման վրա ազդող և սկզբունքները կանխորոշող իրավիճակները: • Ժամանակակից ճարտարապետա-դիզայներական պրակտիկայում օգտագործվող հարդարման նյութեր: • Խոշոր, բազմապլան կառուցվածքների և ճարտարապետական միջավայրի դիզայնի ձևավորման սկզբունքները: • Հարդարման նյութերի որակի ազդեցությունն առանձին կառույցների և համալիրների կառուցվածքային հորինվածքի վրա:
Դասընթացի գրականության ցանկ	• Байер Б. Е. Современные конструкционно-отделочные материалы, М., 1996г. • Викторов А. М., Викторов П. А. Природный камень в архитектуре, М., 1983г. • Гинзбург В.П. Керамика в архитектуре, М.,1984г. • Соловьев С. П., Динеева Ю.М. Стекло в архитектуре, М., 1980г. • Фрилинг Г., Ауэр А. Человек-цвет-пространство, М., Стройиздат, 1973г.